Հավարտ Ս. Պատարագի, Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օծման չորրորդ տարեդարձի առթիվ, կատարվեց Հայրապետական մաղթանք:

Սրբազան արարողությանը ներկա էին Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ, թեմական առաջնորդներ, միաբան հայրեր, Մայր Աթոռի բարերարներ և ուխտավորներ Փարիզից:

ՄԱՅՐ ԱԹՈՌԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵՑ ԲՐԱԶԻԼԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՈՒԽՏԱՎՈՐՆԵՐԻՆ

Նոյեմբերի 9-ին Ս. Էջմիածինը հյուրընկալեց բրազիլահայ ուխտավորներին: Մայր Տաճարում Ուխտի Ս. Պատարագ մատուցեց Բրազիլիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Տաթև արքեպիսկոպոս Ղարիբյանը:

Ս. Պատարագի ընթացքում բոլոր ուխտավորներին ողջունեց Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ վարդապետ Խաչատրյանը: Այնուհետև ուխտավորներին իր պատգամն ուղղեց Տաթև Սրբազանը (տե՛ս էջ 67)՝ ի մասնավորի ասելով. «Մենք այսօր երբ Ուխտի Սուրբ Պատարագ կը մատուցանենք, կը բերենք մեզի հետ Սուրբ Էջմիածնի պանդուխտ զաւակներուն ցաւերն ու տառապանքները, եւ կը խնդրենք մեր հաւատքի Հօր՝ Սուրբ Գրիգոր Լուսաւորչի բարեխօսութիւնը առ Միածին Որդին Աստուած, որ պահպանէ հայ մարդը իր հաւատքին մէջ, ուր որ ալ գտնուի ան: Փրկէ զանոնք օտար հոսանքներէ, որոնք կը հեռացնեն մեր սիրասուն որդիները իրենց հարազատ մօրմէն, արմատներէն, Մայր Հայրենիքէն եւ Առաքելահիմն Աստուածակերտ մեր Մայր Եկեղեցիէն եւ Սուրբ Էջմիածնէն»:

ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՈՒԽՏԻ Ս. ՊԱՏԱՐԱԳ ՄԱՏՈՒՑԵՑ Կ. ՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅԱՆ ՄԻԱԲԱՆ Տ. ԱՐԱՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԹԵՇՅԱՆԸ

Նոյեմբերի 16-ին Մայր Տաճարի օծման 1700-ամյակի առիթով Ս. Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ, հերթական Ուխտի Ս. Պատարագը մատուցվեց: Պատարագիչն էր Կ. Պոլսի հայոց Պատրիարքության միաբան Տ. Արամ եպս. Աթեշյանը:

Հանուն Վեհափառ Հայրապետի ուխտավոր Սրբազան Հորը ողջունեց Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ վրդ. Խաչատրյանը:

Ս. Պատարագի ընթացքում հավուր պատշաճի քարոզ խոսեց Արամ Սրբազանը:

«1700 տարիներ ի վեր մեր Երանաշնորհ Հայրապետներն աղոթեցին մեզ համար, որպեսզի Աստված անսասան պահի իր իսկ ձեռքով հիմնած այս սուրբ եկեղեցին, Հայրապետներն աղոթեցին իրենց փառապած ժողովրդի համար:...Աղոթում ենք մեր բոլորի սիրելի արժանընտիր ու պատվական Հայրապետի՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Վեհափառ Կաթողիկոսի համար: Թող Աստված առողջությամբ և հաջողությամբ պսակյալ երկար կյանք պարգևի Նորին Սրբությանը, լիակատար հաջողություն իր աստվածահաճո գործունեության մեջ: Եվ թող Հիսուս Քրիստոս անսասան պահի իր իսկ հիմնած Ս. Էջմիածնի եկեղեցին»,- նշեց Սրբազան Հայրը (տե՛ս էջ 70):

Ս. Պատարագին ներկա էին բարձրաստիճան հոգևորականներ, Ֆրանսիայի Բուշ դյու Ռոն նահանգի մարզային խորհրդի պատվիրակությունը՝ գլխավորությամբ խորհրդի նախագահ Ժան-Նոել Գերինիի:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ